ABOUT HIV

Հեպատիտի և Տուբերկուլոզի բուժումը

ՄԻԱՎ-ը պայման է ողջ կյանքի համար: Հաճախ շատերը գտնում են, որ կարիք ունեն հավելյալ բուժում ստանալու ոչ միայն ՄԻԱՎ-ի դեմ, այլ նաև ուրիշ հիվանդությունների:

Կարևոր է, որ ՄԻԱՎ-ի և այլ հիվանդությունների բուժումը համակցված լինի, քանի որ դրանց համար նախատեսված դեղամիջոցները կարող են ազդեցություն ունենալ միմյանց վրա: Եթե դուք տարբեր պատճառներով այցելում եք տարբեր բժիշկների, ապա նրանք պետք է կապի մեջ լինեն միմյանց հետ:

Հիմնականում, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանցից շատերը կարիք ունեն բուժում ստանալու նաև վիրուսային հեպատիտի և տուբերկուլոզի դեմ:



Հեպատիտ

Հեպատիտ B-ն և C-ն երկու տարբեր վիրուսներ են, որոնք ախտահարում են լյարդը:

Առողջ լյարդ ունենալը կենսական է բոլորի, հատկապես, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար: Լյարդը կարևորագույն օրգաններից է, որը կատարում է մի շարք ֆունկցիաներ, այդ թվում նաև արյան զտումը ոչ պիտանի նյութերից, օգտակար նյութերի առանձնացումը սենդամթերքից և սպիտակուցների ու հորմոնների արտադրությունը: Այն նաև կենսական դեր է խաղում օրգանիզմի կողմից դեղորայքի հերձծման հարցում:

Լյարդը կարող է վնասվել ալկոհոլի երկարատև օգտագործումից: Բացի այդ, լուրջ վնաս են հասցնում նաև հեպատիտ B և C վիրուսները: Զբուժվելու դեպքում, դրանք կարող են լուրջ վնասներ պատճառել: Հնարավոր է առաջացնեն լյարդի ցիռոզ և քաղցկեղ:

Դուք կարող եք միևնույն ժամանակ բուժում ստանալ և՛ ՄԻԱՎ-ի դեմ, և՛ հեպատիտի: ՄԻԱՎ-ի բուժումը շատ անվտանգ և արդյունավետ է այն մարդկանց համար, ովքեր ունեն հեպատիտ B կամ C:

Ի դեպ, որոշ դեղանյութեր, որոնք օգտագործվում են ՄԻԱՎ-ի բուժման համար, շատ լավ ազդեցություն են ունենում նաև հեպատիտ B վիրուսի դեմ՝ նվազեցնելով օրգանիզմում հեպատիտ B վիրուսի մակարդակը: Դուք և ձեր բժիշկը պետք է ընտրեք բուժման այնպիսի համակցություն, որը կգործի միանգամից և՛ ՄԻԱՎ-ի և՛ հեպատիտ B-ի դեմ:

Հեպատիտ C-ի բուժման մեթոդները արագորեն փոփոխվում են, չնայած, որ դրանք ոչ բոլոր երկրներին են հասանելի: Ավելի հին բուժման մեթոդներն իրենց մեջ ներառում են ամենշաբաթյա ներարկումներ՝ համակցված ամենօրյա դեղահաբերի հետ: Այս տարբերակը գուցե արդյունավետ է շատերի համար, բայց ոմանց մոտ առաջացնում է կողմնակի տհաճ ազդեցություններ: Բուժման ավելի նոր մեթոդները ներառում են միայն ամենօրյա դեղահաբերը: Այս եղանակով բուժումը արդյունավետ է գրեթե բոլորի համար և ունի ավելի քիչ կողմնակի ազդեցություններ: Հեպատիտ C-ի մի քանի ամսյա նմանատիպ բուժումը կարող է ամբողջովին ձերբազատել մարդուն այդ վիրուսից:

Տուբերկուլոզ

Տուբերկուլոզը բակտերիալ վարակ է, որի նկատմամբ շատ խոցելի են ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, որոնց իմունային համակարգը թուլացած է:

Բակտերիաները կարող են փոխանցվել մի մարդուց մյուսին օդի միջոցով: Դրանք սովորաբար ախտահարում են թոքերը, սակայն հնարավոր է ախտահարեն նաև մյուս օրգան համակարգերը, ինչպիսիք են ոսկորները և անոթները:

Առողջ իմունային համակարգով մարդիկ կարող են իրենց օրգանիզմում կրել այդ վիրուսները, սակայն պահել դրանք հսկողության տակ: Իսկ այն մարդիկ, որոնց իմունային համակարգը թուլացած է (օրինակ, թուլացած է ՄԻԱՎ ունենալուց և համապատասխան բուժում չստանալուց) անկարող են դրանք հսկողության տակ պահել:

Եթե դուք վարակվել եք տուբերկուլոզով, ապա սովորաբար պետք է բուժում ստանաք և՛ տուբերկուլոզի, և՛ ՄԻԱՎ-ի դեմ.

- Հակատուբերկուլոզային դեղամիջոցները մաքրում են օրգանիզմը մանրէներից և բուժում են տուբերկուլոզը: Այս բուժումը սովորաբար տևում է վեց ամիս, բայց հնարավոր է տևի ավելի շատ:
- Հակառետրովիրուսային դեղամիջոցները նվազեցնում են ապագայում, կրկին, տուբերկուլոզով վարակվելու հավանականությունը: Դրանք ուժեղացնում են իմունային համակարգը:

www.pro-vich.info և www.about-HIV.info կայքերի ստեղծմանը մեծապես աջակցել է Janssen-ը: Վերոհիշյալ ֆինանսավորում տրամադրող կազմակերպությունը երկու կայքերից որևէ մեկի բովանդակության վրա խմբագրական որևէ ազդեցություն չի ունեցել: Այս կայքում ներառված ինֆորմացիան միտված է աջակցելու առողջապահական հերկայացուցչի պրոֆեսիոնալ խորհրդատվությանը և ոչ թե փոխարինելու այն: Ձեր կարգավիճակի վերաբերյալ խորհուրդ ստանալու համար անհրաժեշտ է դիմել ձեր բժշկին կամ առողջապահության ոլորտի այլ հերկայացուցչի:

Տեղեկատվական թերթիկները ստեղծվել են NAM aidsmap-ի, European AIDS Treatment Group-ի, Aids Action Europe-ի, East Europe & Central Asia Union of PLWH և ITPCru (The Treatment Preparedness Coalition)-ի համագործակցությամբ:Հավելյալ տեղեկությունների համար կարող եք այցելել՝ www.about-hiv.info; www.pro-vich.info; www.aidsmap.com:
Մեծ Բրիտանիայում գրանցված բարեգործական կազմակերպություն: 1011220